ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1078-Ա «21» մարտի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.161 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության հ.Ն/8910-25 գրությունը՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Զաքարիա Քանաքեռցու փողոցի հ.145/3 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով մանկապարտեզին տրամադրելու մասին:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Զաքարիա Քանաքեռցու փողոցի հ.145/3 հասցեի անշարժ գույքը (0.538696հա հողամաս, 3086.91քմ մակերեսով շինություն)՝ սեփականության իրավունքով պատկանում է Երևան համայնքին /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 06.02.2025թ. հ.11022025-01-0346 վկայական, գաղտնաբառ՝ 3GBULFAQ6ABR/:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, 466-րդ և 468-րդ հոդվածներով, պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի 4-րդ ենթակետը.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Զաքարիա Քանաքեռցու փողոցի հ.145/3 հասցեում գտնվող՝ 3086.91քմ մակերեսով շինությունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 5386.96քմ մակերեսով հողամասը՝ համաձայն ԱՁ Սոֆիա Ավագյանի 01.09.2024թ. տրված հատակագծերի՝ անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2030 թվականի ապրիլի 1-ը ժամկետով, տրամադրել «Երևանի հ.161 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երևանի հ.161 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ կնքել.

1) համաձայնագիր՝ Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 12-ի 394-Ա որոշման հիման վրա՝ Զ.Սարկավագի փողոցի հ.145ա հասցեի 2083.7քմ մակերեսով տարածքի և զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 5650քմ մակերեսով

հողամասի համար 2016 թվականի ապրիլի 12-ին կնքված գույքի անհատույց օգտագործման հ.8260 պայմանագիրը լուծելու մասին.

2) գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Զաքարիա Քանաքեռցու փողոցի հ.145/3 հասցեի 3086.91քմ մակերեսով շինությունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 5386.96քմ մակերեսով հողամասը տրամադրելու մասին՝ դրան կցելով տրամադրվող տարածքի հատակագիծ-սխեման:

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 2-րդ կետով նշված պայմանագիրը և համաձայնագիրը ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանցից ծագող իրավունքները՝ պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում.

2) պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են «Երևանի հ.161 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ